18/11/2020թ.
ժամը 13:30

ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան
Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Ներսիսյան 7

թիվ՝ 2.1

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**
Կ. Մելիքսեթյան - Բուժական գծով փոխտնօրեն:

**Հանձնաժողովի անդամներ**
Մ. Սահակյան – Դեղորայքի ապահովման բաժնի վարիչ

Մ. Մելիք-Անդրեասյան -Մեծահասակների կլինիկա-դիսպանսերային բաժնի վարիչ

Լ. Մուրադյան- Լաբորատոր ախտորոշման բաժանմունքի վարիչ

Գ.Գևորգյան – Սեռոլոգիական բաժանմունքի վարիչ

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Անի Գալստյան /գնումների գծով պատասխանատու/

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

---

**Հայտերի բացման և գնահատման մասին**
**գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մելիքսեթյան**

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 **Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին**

- «ԷֆԲԻ էյ» և «Խաչպար» ՄՊԸ-ների կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրեցին, որ վերջիններս կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:
- «Նանա Մեդ» ՄՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /գնային առաջարկում առկա է **անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև/**: Հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ ենթակետը այն է՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Հանձնաժողովը որոշեց **բավարար գնահատել «Նանա Մեդ» ՄՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը հիմք ընդունելով տառերով նշված գնային առաջարկը:**

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար,
2) Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ նիստը կասեցնել մինչև **27.11.2020թ ժամը 12:00**-ն և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:
3) Բանակցությունների նիստը տեղի կունենա **27.11.2020թ ժամը 12:00-ին:**

Ընդունել որոշում *կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)* ձայներով

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**
Կարեն Մելիքսեթյան————————

**հանձնաժողովի անդամներ**
Մ. Սահակյան————————

Մ. Մելիք-Անդրեասյան ____________________

Լ. Մուրադյան ____________________

Գ. Գևորգյան ____________________

Գնահատող հանձնաժողովի քարտուղար

Անի Գալստյան ____________________